պետները ավելի փոքր տոհմերից. Շահուռնեցի Ամադին, որ իշխում էր Վայոց ձորի Հերհեր գյուղում և շրջակայքում, «նիզակակալ և կորովաձիգ սպարապետ» էր «ի դրան թագաւորաշուք իշխանաց Բուրթելին (Որբելյան) և Վախախին»*։ Զորքը կազմված էր «ազատ» և «ռամիկ» հեծյալներից. Վարդանի Դանիելի մեկնության վերջում կամ Զագավանից ժողովի կանոնների նախաբանի մեջ, ինչպես և Կեչառեցու Ողբի, ապա քարոզչական մատենագրության մեջ յիշատակություններ ունինք և բարեմաղթություններ իշխանների և նրանց հեծելազորքի մասին**։

Զինվորականի հետ նկատվում է և քաղաքացիական կամ վարչական պաշտոնեության կազմակերպություն, թեև վոչ բոլորովին պարզ իրենց եյությամբ։ Արձանագրությունների և յիշատակարանների մեջ հաճախ հիշվում են «հեճուպ», «ամիրա», «ձեռնաւոր», «տամղաճի», ինչպես և «մուճուր» (մուճրութիւն) և «քեթոբար» պաշտոնյաները։ Հեջուրները իշխանական տների անմիջական վարիչներն եյին կամ վերակացուները. Իվանեի և Ավագի տան վերակացուն էր կամ հեջուպը Գրիգոր Տղա կոչված, Խաչենի ազատներից, որին Իվանեն հանձնում է մահվան ժամանակ «զորդին իւր և զտուն». իսկ Ավագը, Կայենո բերդում թաթարներից պաշարված ժամանակ, նրան դեսպան և ուղարկում Զարմաղանի մոտ, յուր հպատակությունը հայտնելու։ Այս Գրիգորը նույն պիտի լինի «հեջուր Գրիգորի» հետ, մի քանի անգամ յիշված Հոռոմոսի արձանագրությունների մեջ, որ նույն վանքի անմիջական տերն էր յուր Սմբատ և Իշխան յեղբայրների հետ***։ ԺԴ. դարի առաջին քառորդում Զաքարյանների մյուս ճյուղի՝ Շահնշահի տան «հեջուպ և առաջնորդ» էր Զաքարիա Պահլավունին, ինչպես վերև տեսանք։

Ամիրայության պաշտոնը կապված էր քաղաքական և քաղաքների կառավարության հետ. Քուրդ Արծրունին, Սադուն աթաբակի մեծ պապը, Տփխիսի ամիրապետն էր Վրաց պետության մեջ, Մահկանաբերդի և Կայենո իշխանը լինելով հարդերձ։ Այս մասին պատմում և վերև հիշված Դաւիթ յուր հիշատակարանում[1]։

Շահնշահ մեծի ժամանակ, տեսանք, Անիի ամիրայության պաշտոնն էր կատարում Վահրամ (Պահլավունին)*։ Համեմատաբար ավելի ստոր եյին ձեռնավորության և մուճուրության պաշտոնները, հարկավաքներն ու հում նյութերով հավաքված հարկերի մթերապետները**։ Ապա հիշվում են «տաղմաճիք» և «քեթոբար», առաջինները Անիի մեջ, վաճառելու բերված կենդանիների վերա կնիք եյին խփում և վորոշ հարկ վերցնում, իսկ յերկրորդները, յերևի, հարկերի հաշիվները պահող կամ ցուցակագրող, նոտար***։

Քաղաքական կյանքին համընթաց էր և քաղաքակրթականը։ Բագրատունյաց անկումով և Սելջուկյան արշավանքներով, գրեթե, մարել էր հոգևոր - քաղաքակրթական կյանքը. ազնվականությունը, տեսանք, սպառված կամ աննշան դրության էր հասած և յեկեղեցու նվիրապետության ծանրությունը արևմուտք փոխադրված. իսկ այս յերկու տարրերն եյին կազմում միջին դարերում քաղաքակրթական կյանքի ղեկավարները։ Մի դարուց ավելի մեր յերկիրը յենթարկված էր բարբարոսական արշավանքների. կյանքը դարձել էր անապահով և անկայուն. վոչ վոք ասել չէր կարող, թե վաղն ավելի մեծ դժբաղդություն չպետք է բերե, քան այսոր։ Այսպիսի պայմանների մեջ հնարավոր չէր քաղաքակրթական կյանքի կամ ստեղծագործության մասին մտածել։ Ցեվ հիրավի, այս շրջանում շինարարական, գրչության արվեստի, ելն ուշադրության արժանի յերևույթները հազվագյուտ են Հայաստանում. Անիի և ուրիշ մահմեդական իշխանների մի քանի փորձերը շինարարության մեջ չնչին են այս շրջանի կործանարար բնույթը փոխելու համար։ Բայց այդ ժամանակավոր մի յերևույթ էր ծանր դպքերի բերմունքով. փոխվեցին հանգամանքները, պետք է փոխվեր և հոգևոր - քաղաքակրթական կյանքի պատկերը։

ԺԲ. դարու ութսունական թվականներից սկսած վիմական և գրական հիշատակարանները շինարարական և հոգևոր կյանքի մի նոր արշալույս են ավետում. նորոգվում են հին վանքերը կամ նորերը շինվում. յուրաքանչյուր իշխանական տոհմ յուր սիրելի վանքն ունի կամ գերեզմանատունը, յուր իշխանության հոգևոր կեդրոնը, որ վայելում է նորա հովանավորությունը. մի աղնիվ մրցակցություն է սկսվում իշխանական տոհմերի մեջ, գերազանցելու միմյանցից շինարարական և հոգևոր կյանքի նպաստավորման գործում։ Հոգևոր դասի ներկայացուցիչները յետ չեն մնում իշխանական տոհմերի ներկայացուցիչներից իրենց շինարարությամբ, արվեստի և գիտության հովանավորությամբ։ Գրական և շինարարական կյանքի առաջին յերևույթներն սկսվում են հյուսիս—արևելյան գավառ-

---

* Վարդաշենի յեկեղեցու ավետարանի յիշատակարանը, որ մեր խնդրանոք արտագրել է Պատվական Քուշմանյան։

** Ձեռ. Ս. Եջմ. № 1520, 116ա նաև № 2049, 359բ։ Շողակաթ. Գիրք Ա. յեր. 45։ Փիրղալեմյանի հիշատակարանների ժողովածուի մեջ (անտիպ), 1333 թվին « ի սբ. ուխտս Կոշայ» գրված Ճաշոցի Հակոբ գրիչը հիշում է իրենց գավառի (Արագածոտն) Վահրամ իշխանին՝ «որդւոյ մեծին Իւանէի», «զոր և տէր Յիսուս պահեսցէ զսա խաղաղական կենօք և յերկար ժամանակք ամենայն հեծելազօրօքն իւրովք փառաց ի փառս բարձրանալով և զօրացուսցէ զսուր նորա ի վերայ թշնամեաց իւրոց»։։

*** Գանձակեցի. 210. 344. Ալիշան. Շիրակ, 17, 20, 22։

1. Ձեռ. Եջմ. Ն 8. №913։ Հավել. Բ 1։ Տես և Ջալ. Ա. 31։

* Տես սույն գրքի յեր.

** Շողակաթ. Ա. 1913. մեր հոդվածը՝ Զագավանից ժողովը. յեր. 34։

*** Ալիշան. Շիրակ. 62։